ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» սեպտեմբերի 2017թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**
**ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.648-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Ռաֆֆու փողոցի հ.115 շենքի հ.31՝ 30.1 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 23.10.2012թ. հ.23102012-01-1722 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մարգարիտա Համբարձումյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

# «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Ռաֆֆու փողոցի հ.115 շենքի հ.31՝ 30.1քմ մակերեսով բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Մարգարիտա Համբարձումյանին:

Ռաֆֆու փողոցի հ.115 հասցեում գտնվող գույքը նախկինում հանդիսացել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ենթակայության երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոնի բույսերի պաշտպանության լաբորատորիայի վարչական շենք, սակայն տեղում դեռ 90-ական թվականներից բնակվել են քաղաքացիներ և այն փաստացի օգտագործվել է որպես բնակելի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի նոյեմբերի 20-ի հ.689 որոշմամբ նշված շենքը սեփականության իրավունքով անհատույց հանձնվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքին:

<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի թաղային համայնքների սեփականություն համարվող գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Երևանին: Արդյունքում Ռաֆֆու փողոցի հ.115 շենքի հ.31՝ 30.1քմ մակերեսով բնակարանի նկատմամբ գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 23.10.2012թ. հ.23102012-01-1722 վկայական):

Համաձայն Ռաֆֆու փողոցի հ.115 շենքի լիազորագրային կառավարչի կողմից տրամադրված տեղեկանքների՝ քաղաքացի Մարգարիտա Համբարձումյանը 1993 թվականից փաստացի բնակվում է վերոնշյալ բնակարանում՝ պատշաճ կատարելով բնակարանի սպասարկման համար անհրաժեշտ վճարումները, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով վերջինս չի կարողացել բնակարանի նկատմամբ ձևակերպել իր սեփականության իրավունքը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ քաղաքացի Մարգարիտա Համբարձումյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև վերջին 10 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում վերոնշյալ քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ